ՍՈՒՐՀԱՆԴԱՆ
ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

# ԼՐԱԳԻՐ
## ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

1849 — 25 ՄԱՐՏ | ՆՈՒՄԵՐԱ — 103 | ՃԷՄԱԶԻԼ ԱԽԸՐ 13 — 1265

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՊՐԱՀԻՄ էֆէնտին՝ որ տէրսանէի դատ ձառանը ժողովոյն անդամներէն մէկն էր, Սուրրէ էմինի կարգեցաւ։

Մուսթաֆա աղան՝ Արղանի ու Կէպան մադէններուն հոգաբարձու անուանեցաւ։

Նաֆիզ էֆէնտին՝ որ երբեմն ռուզնամէ-ճեան ատեանին առաջին գրագիրն էր, այժմ նոյն ատեանին Մուհասէպէճի դրուեցաւ։

ԸՐԺԵՆԱՊԱՏԻ Էսհէմ փաշան՝ որ երբեմն Բաստի կառավարիչ էր, այժմ Երու-սաղէմի կառավարիչ կարգեցաւ։

Արքունի սենեկապետ Միւլքիյան աղան՝ Պէհէմանի ատեանին անդամ անուանեցաւ։

Երբեմնական սենեկապետ Մէհմէտ աղան՝ Շամ Թարապուլուսի մութասարրըֆ կոչ-ւեցաւ։

Արշիպեղագոսեան կղզիներուն կուսա-կալ վսեմափայլ Մուխլիսի փաշան՝ անցեալ երկուշաբթի մեկնեցաւ նաւարկութեան Մէ-ճիտի պուրի շոգենաւով՝ դէպ 'ի իւր պաշ-տօնին տեղը։ Նոյն շոգենաւը մէջը յիշեալ կուսակալին քանի մը օր կենայ, և փաշան ա-նով շրջելով կղզիները պիտի պտտի։

Միրալայ Մուխթար պէյը՝ Սաֆի-պուրի շոգենաւով մեկնեցաւ անցեալ երկու-շաբթի Պոլսէն դէպ 'ի Եգիպտոս։

Հաճի Բուղի պէյը՝ որ դեսպանութեամբ Պոլիս եկած էր, այս ուրբաթ ձմերոյ Երա-ու շոգենաւով գնաց Տրապիզոն, ուսկից ալ իւր երկիրը պիտի երթայ։

Պոլիս Նապոլ Թագաւորութեան դեսպանը և նոյն դեսպանատանը գտնուող բոլոր գոր-ծակալները իրենց պաշտօնէն ետ քաշեր են. ուստի դեսպանատունը գոցեր է, նաև միջնորդութեան գտնուող Թարգմանութիւնուն ամենուն ալ փոխանորդ ունին Օսմանեան տէրու-թեան հպատակ ըլլալու։

[illegible] 29 [illegible] թարգմանութիւնը [illegible]։

ՅԱՅՏՆԻ է մեր յարգուելեացը, որ մի-միայն առևտրական գործոց դիւրութեանը համար՝ Օսմանեան տէրութիւնը ամէն տա-րի շատ քսակ զոհ կընէ, որպէս զի լիրա ըս-թէրլինան 110 ղրուշէն աւելի չըլլայ, և ուրիշ դրամներ ալ ասոր բաժակներն ալ անոր յարմարցնելով մի և նոյն արժէքը ունենան. այս տարի ալ այս բանը առաջ բերելու 'ի գործ դրուեցաւ մասը՝ զամպիյոնի դրամանո-ցին պայմանագիրը նորոգեց. սակայն ասոր կատարեալ գործադրութիւնը և յառաջու-թիւնը՝ թէ Օսմանեան հին բաժակները և թէ ասոր զանազան բաժակները շուկայի մէջ չանհետելով ու չը տրուելով կ'ըլլայ, և այս ալ փոխանակողներուն օժանդակութեամբ կը կարօտի. վասն զի յիշեալ դրամներուն հա-սարակէն 'ի վեր՝ բաժակին կանոնը բաւ բա-ւական թէպէտ պահուեցաւ, բայց այս տարի բոլորովին խանգարուեցաւ. և ասոր հա-մար է որ դրամը ասոր դրոշմները (սեքքէ-ները) որոշեալ արժէքէն խիստ շատ աւելի գնով կը բռնին. ուստի Օսմանեան տէրու-թիւնը՝ զամպիյոն միջնակ բանելու հա-մար հարկադրեցաւ՝ ամէն տարի բռած ծախ-քին եռապատիկ ընելու, և պարկէշտ փո-խանակողներ ալ խիստ շատ վնասներ կրեցին։

Պոլիս գտնուող երևելի ասոր փոխա-նակողներ այս վիճակին անտանելութիւնը տե-սնելուն եղած վնասները և զամպիյոնի դրա-մանոցին ընդհանուր օգուտը մտածելով և խոստովանելով իրենց յօժար կամօքը բա-ժակի կանոնին վրայօք քանի մը խոստում-ներ ըրին, ու իրենց ստորագրութեամբը մուրհակ տուին, որուն մէկ օրինակը մեր յարգուելեանը ներկայեցինք։

Նոյն մուրհակին մէջ դրամանոցուղէին (զամպիյոնին) առնելիքն ու տալիքն վրայօք կանոն մը հաստատելու. այնպէս ալ կայ, որ Օսմանեան տէրութիւնը մտածելով՝ յառ-կայէս բաւական մեր դրամ պատրաստեց, որպէս զի հարկը առնելու՝ փոխանակողնե-րը դիւրութեամբ մը բաժակ գտնելու կարող ըլլան, որովհետև երբեմն առևտուրին վրայ զոյլ դրամաթուղթին առնելու ու սար-ւած առնէր վնաս և դժուարութիւն կը կրէ-ին. նաև զամպիյոնի դրամանոցին վերակա-ցու գտնուող միւսիւ ժամ Պէլյոնին ու միւսիւ Մանօլաքի Պալթաձիին ծնուածին ալ բաժնեմաս մը հաստատեց։

Ասով տարակոյս չը կայ որ փոխանա-կողները իրենց խոստմանը համաձայն բաժա-կին կանոնը միշտ անխախտ կը պահեն, որ-պէս ալ բաժակները առևտուրի մէջ չեն դար-ձներ. թէ որ ասոր հակառակ պատահի, Օսմանեան տէրութիւնը՝ յիշեալ դրամանո-ցին ալ չը կրնար պիտի նայիլ, և այն առնէր բաժակներուն գները կը յայտնէն, ուսկից փո-խանակողներուն վնաս կ'ըլլայ, և այս վնասին վրայօք ալ ամենևին բողոք մը չը լսեր Օս-մանեան տէրութեանը. անոր համար կաս-կած չը կայ որ բանը մինչև այն ատենն չը հասնիր փոխանակողները ամենայն մասամբ փոյթ կ'ունենան։

Ի վերայ այսր ամենայնի՝ Օսմանեան տէ-րութիւնը կը խնդրէ, որ մեր յարգուելի-նն ալ այս բանին հոգ տանի, որպէս զի թէ՛ մայ-րաքաղաքիս մէջ և թէ՛ գաւառ երկիրները գտնուող մեր տէրութեան փոխանակողները նոյն կանոնաւ վարուին։

ՊԷՅՕՂԼՈՒ Աղա Համամին ու Թաքսի-մին մէջ տեղը՝ 25—30 տարի շինուած ու տուն-կէր քարուկիրէ շէնք մը կը շինէին. այս չո-րեքշաբթի ժամը չորս ու կէսին՝ նոյն շէնքին բոլոր գտնուած և հրդեհէն մնացած մեծ-տուն մը մէկէն 'ի մէկ փլաւ վրանին, բան-ւորներուն շատը մօտը գտնուած մառանի մը մէջ հազիւ հազ կրցան ինքզինքնին նե-տել, բայց մէկ քանին ալ չը կրնալով փախ-չիլ, պատին տակը մնացին. որոնցմէ՝ վերը մե-ռան, և մէկ քանին ալ խիստ դէշ վիրաւոր-ւեցան։ Պատին մէկ կտորն ալ մօտը գտնը-ւած փայտաշէն տուն մը վրայ ջախջխելով՝ տանը մէկ կողմը բոլորովին կործանեց. բայց բարե-բաղդաբար մէջը մարդ չը գտնուելուն հա-մար հոն վնաս մը չը տուաւ։

ՆԱԽԸՆԹԱՑ Թերթերնիս մէկուն մէջ ծանուցինք, որ բժշկական ուսումնի դպրո-ցին Լրագիր մը պիտի հրատարակէ. հիմա ալ կը փութանք ծանուցանելու, թէ յիշեալ

